Կենսաթոշակային հեղափոխություն՝ չիլիական մոդելով
Գլխավոր «հեղափոխականը» Հայաստանի կառավարությունում



Հայաստանի կառավարությունը որոշել է իրականացնել հեղափոխություն չիլիական մոդելով: Հայաստանում ներդրվել է կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգ, իսկ 2014թ. նաև գործելու է պարտադիր կուտակային համակարգը: Հայաստանյան մոդելը բավական նման է 1981թ. Չիլիում ներդրված կուտակային համակարգին, որը մի շարք մասնագետներ գնահատել են որպես «հեղափոխական»: Չիլին առաջին երկիրն էր, որը բաշխողական համակարգից անցում կատարեց կուտակայինի: Թեև հայաստանյան մոդելը նման է չիլիականին, Չիլիի մասնավոր կենսաթոշակային համակարգի կնքահայր Խոսե Պինիերան չի ցանկանում շատ խոսել հայկական մոդելի մասին, քանի որ այնքան էլ ծանոթ չէ դրան:

Երեկ կառավարությունում քննարկումից հետո մամուլի ասուլիսին Խոսե Պինիերան, որը, աշխարհով մեկ շրջագայելով, անվճար բացատրում է մասնավոր կենսաթոշակային հաշիվների վրա հիմնված կենսաթոշակային համակարգի առավելությունները, ասաց, որ Հայաստանի վարչապետից ստացել է Հայաստան այցելելու հրավերքի նամակ և եկել է Հայաստան: Ըստ նրա՝ համակարգը, որը Չիլիում ներդրվեց 30 տարի առաջ, հիանալի համակարգ է՝ աշխատողները միջոցներ են ուղղում անհատական հաշիվներին: «Չիլիում յուրաքանչյուր աշխատող դարձել է կապիտալի սեփականատեր, նա շատ է աշխատում, շատ է տնտեսում, ինչի արդյունքում աճում է տնտեսությունը»,- ասաց նա՝ հավելելով, թե այս տարիների ընթացքում Չիլին մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշով առաջատարն է Լատինական Ամերիկայում և 3-5 տարի հետո դառնալու է զարգացած երկիր:

Չիլիական կենսաթոշակային հեղափոխության հեղինակն ասաց, որ կուտակային համակարգը երեք արդյունք է ապահովում: Առաջին՝ որևէ աշխատողի անհատական հաշվից գումար չի պակասել, երկրորդ՝ 30 տարի շարունակ նրանք ստացել են 9% եկամուտ՝ գնաճը հանած, և երրորդ՝ բարեփոխումների արդյունքում ձևավորվել է ներդրումային կապիտալ, ինչը նպաստել է ազգային տնտեսության աճին:

«Կապիտալի» հարցին, թե 1981թ. ինչ մակարդակի էր գտնվում Չիլիի կապիտալի շուկան, Պինիերան պատասխանեց, որ համակարգի ներդրման ժամանակ կապիտալի շուկան բավական փոքր էր, թույլ զարգացած, բայց համակարգի ներդրման հետ մեկտեղ՝ բարեփոխվեցին մի շարք օրենքներ, որոնք ապահովեցին կապիտալի շուկայի զարգացումը: Ըստ բանախոսի՝ կուտակային համակարգի ներդրումը նաև ապահովեց կապիտալի շուկայի զարգացումը, և միջոցներն ուղղվեցին ենթակառուցվածքներ, արդյունաբերություն, հատկապես հանքարդյունաբերություն:

Մյուս հարցին, թե ինչ ազդեցություն է ունեցել համաշխարհային ֆինանսական ճգնաժամը Չիլիի կուտակային հիմնադրամների վրա, Պինիերան պատասխանեց, որ համաշխարհային ճգնաժամն ուղղակի ազդեցություն չի ունեցել կենսաթոշակային գումարների վրա, այլ ունեցած անուղղակի և այդ բացասական հետևանքներն արդեն փոխհատուցվել են: Չիլիում օրենքով խստորեն կարգավորվում են միջոցների ներդրման ուղղությունները, և առկա են սահմանափակումներ. արդյունքում ներդրումների ուղղությունները բազմազան են, ինչը նվազեցնում է ռիսկերը:

«Կուտակային համակարգի միջոցներից ոչ մի դոլար ներդրված չի եղել Ուոլ սթրիթի այն հիմնադրամներում, որոնք սնանկացան»,-ասաց Պինիերան՝ հավելելով, թե օրենքով սահմանել են, որ ներդրումներ կարելի է կատարել AAA վարկանիշ ունեցող ընկերությունների արժեթղթերում:

Նշենք, որ եթե Չիլիում աշխատակիցը կենսաթոշակային կուտակային համակարգին է փոխանցում աշխատավարձի 10%-ը, ապա Հայաստանում ներդրվող համակարգը նախատեսում է, որ աշխատողները վճարումներ կկատարեն իրենց աշխատավարձի 5%-ի չափով, ևս 5% այդ աշխատողների անհատական հաշվին կփոխանցի պետությունը:

Հայաստանի կառավարությունը նույնպես քննարկում է մեկ արժեթղթում, մեկ ընկերությունում կատարվող ներդրումների սահմանափակումների հնարավորությունը: Օրինակ՝ Չիլիում կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչներին արգելվում է գումարների 7%-ից ավելին ներդնել մեկ ընկերության բաժնետոմսերում և 5%՝ մեկ բանկի բաժնետոմսերում, պետական պարտատոմսերում թույլատրվում է ներդնել միջոցների ոչ ավելի, քան 50%-ը, արտասահմանյան արժեթղթերում թույլատրվում է ներդնել մինչև 30%-ը՝ բարեփոխումների սկզբնական փուլում այդ շեմը սահմանված էր մինչև 5%: Բարեփոխումների սկզբնական փուլում Չիլիում կառավարման ֆոնդերի թիվը կազմում էր 11, հետագայում այն դարձավ 23, իսկ ներկայում մնացել են 6-ը:

Նինա Աբազյան, «Կապիտալ», 24.05.2011 թ.